

ՎԱՐՁՈՒԹԻՒՆ «ՆՈՐ ՕՐ»

ՆԱՄԱԿ ԿԱՄ ՈՆԵՒ ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ
ՊԵՏԲ ԵՒ ՈՒՂՂԱՆ ՈՐ
Վարչութիւն ՆՈՐ ՕՐ Բազմի
ԳԱՀԻՐԷ

Direction du journal
NOR-OR
Caire

Չեռագրորեն եւ չեն գործուիր,
ԱՐՏՕՆԱՏԵՐ Ժ. ՄԻՆԻՆԷ

ՆՈՐ ՕՐ

Լ Ր Ա Պ Ի Ր
ԱԶԳԱՅԻՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՈՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ
ԿԸ ՀՐԱՏԱՐԱՆՈՒԻ ՉՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇՍԱՄԹ ՕՐԵՐԸ

ԲԱՃԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

| | |
|--|----------|
| ԵՂԻՊՏՈՍ | |
| Գանձիւի համար քարեկան | 50 |
| » » վեցամսեայ | 30 |
| Շրջակայից » քարեկան | 60 |
| » » վեցամսեայ | 35 |
| ԱՐՏՕՆԱՏԱՆԻ ՇՍԱՐ | |
| Քարեկան | Ձրանգ 18 |
| վեցամսեայ | » 40 |
| ԲՈՒՍՈՒՑ ԵՒ ՎՈՂՂԱՆԻ ՇՍԱՐ | |
| Քարեկան | Բուրքի 7 |
| վեցամսեայ | » 4 |
| ԲԱՃԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՆԻՒԿ ԵՒ ԵՒ ԹՂԹԱՏԱՐԻ ՇՍԱՐԸ ԹԵՐԲԻՆ ՎԱՐՉՈՒՔԵԱՆ ՎՐԱՅ Ե | |

ՇՍԱՐ ՆՈՅԵՄ. 18/1 ԴԵԿՏ.

ՔՍԱՆ ՓԱՐԱՅ ՈՂՋ

Ա. ՏԱՐԻ ԹԻ 51

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ՆԵՐԿԱՑ ՏԱՐԻՈՑԵՍ ՕԳՈՍՏՈՍԻ 11ԷՆ ՄԿՍԵԱԼ ՎԱՐՁՈՒԹԵԱՆՍ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԿՆԻՔՆ ՈՒ ՔԱՐՏՈՒՂԱՐ-ՆԵՐԿԱՑԱՑՈՒՑԻՉ ՏԻՄԱ ՄՄԲԱՏ ՓԱՓԱՉԵԱՆԻ ՍՏՈՐԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԶԸ ԿՐՈՂ «ՆՈՐ ՕՐ»Ի ԸՆԿԱՂԱԳԻՐՆԵՐՆ ԱՆՎԱՅԻՐ ԿԸ ՆԿԱՏՈՒԻՆ:

ՀԱՅՑ ԵՒ ՊՕԵՐԸ

Թրանսպարեն նախագահը, Պօէրնե-րու անվեհեր պետը վերջապէս հասաւ փարիզ. Ամեն կողմէ, ամեն ազգէ պատգամաւորութիւններ փութացին համակրութիւն յայտնել ծերունի նախագահին:

Վիեննայի մէջ 500 հազար ստորագրութեամբ ուղերձ մը պատրաստուած է, որ պիտի զրկուի փարիզ Պ. Գրուկէրին. այդ ուղերձին պիտի կցուի նաև իբր ընծայ թրանսպարենի գրոշակ մը:

Երևակայեցէ՛ք՝ անգին անգլիական կառավարութիւնը կը պատրաստուի Դեկտեմբեր 4ի Բառլամէնթի նստին մէջ պաշտօնապէս յայտարարելու թէ՛ թրանսպարեն և Օրանձ այլևս կցուած են անգլիական սեպհականութեան, որովհետև Միզդիա պատերազմին մէջ յաղթած ըլլալով Պօէրնեբուն, իրաւունք ունեցած է ասոնց բնակած երկիրները նուաճելու և հոն տիրելու:

Մինչդեռ ասոնք ժողովուրդը գրոշակ կը նուիրէ Պօէրնեբուն, իրենց երկրին համար. որովհետև ժողովուրդին դժուար կուգայ ընդունել թէ Պօէրնեբուն յաղթուած են և կորուսած իրենց անկախութիւնը. Պօէրնեբուն ազատութիւնը, այս է ընդհանուրին իղձը:

Իռլանտացիք անգամ մասնաւոր ուղերձ մը պիտի ներկայացնեն. Ֆրանսայէ, Հոլլանտայէ, Զուիցերլանտէ ամեն երկրէ պատգամաւորութիւններ պատրաստուած են ձայն բարձրացնելու ի նպաստ Պօէրնեբուն անկախութեան:

Այսքան տիեզերական աղմուկին մէջ Հայը լուռ կեցած է. ինչո՞ւ Հայն

ալ չը կցէ իր ձայնը՝ ասոնց ձայնին. նուաճեալ և գերիշխան ազգի մը ձայնը միթէ աւելի բազմը չը հնչեր:

Փարիզի Հայերը թող օգտուին առիթէն՝ արձանագրելու նաև Հայուն անունը՝ իբրև նախանձախնդիր նուաճեալ ազգերու ազատութեան. թող զիայնեն թէ Հայը չը լուր երբ պէտք կ'ըլլայ անիրաւութեան դէմ բողոքել և բռնաբարեալին համակրիլ ու օգնել բուհով, դրամով կամ զրիչով:

Հայուն կամ ժողովրդին ձայնովը չէ որ պիտի փրկուի Պօէրը, ցորչափ անխիղճ կառավարութիւնները իրենց ձայնը չը բարձրացնեն. բայց միութարութիւն, օգնութիւն, համակրութիւն բռնաբարեալներու՝ մարդկային պարտականութիւններ են:

Պօէր մը միութարելով մենք միութարուած կ'ըլլանք. անոր համակրելով մենք անոր ու պետին համակրութիւնը վայելած կ'ըլլանք:

Պ. Գրուկէր՝ օրհասական ազգի մը իբրև արևաշիւղ պետ, թող լսէ Հայուն ձայնը ու դիպէ անոր դէմը. Հայուն ձայնը ու դէմը՝ Գրուկէրի մտքին մէջ նուաճեալ ազգի մը տխուր յիշատակները պիտի արթնցնեն:

Պիտի մտաբերէ թէ այսօրուան Հայը ասկէ հինգ հարիւր տարի առաջ անկախ էր, հարուստ հողերու, հանքերու և զիւրքերու տէր էր. դրացի բռնակալները նախանձելով անոր հարստութեանը նուաճեցին անոր երկիրները:

Պիտի խորհի թէ՛ ուրիշ բռնակալութիւն մը նոյնը ընել կուպէ այսօրուան Պօէրնեբուն և իրենց պետին:

Պօէրը անկախ էր ու հարուստ ու կիւի հանքերու տէր. Անգլիա հանդարտ չը թողուց Պօէրը, նախանձեցաւ անոր հարստութեանը ու գիրքին, ու զայն յափշտակելու համար, եօթանասուն միլիոն անգլիական ոսկի վատնեց թրանսպարեն պատերազմի դաշտին վրայ. հոն քսան հազար անանգլիացիներու արիւն թափել տըլաւ. զօրք, զօրապետ, գնդապետ, ժէնէրալ հոն մեռան թաղուեցան իրենց ետին թողլով որբեր ու այրիներ:

Եթթանասուն միլիոն ոսկի ծախսեց և դեռ միլիոններ պիտի վատնէ. Որովհետև նա հաշիւ ըրած է առաջուց թէ՛ կարսնցուցած դրամը շատ

լու պիտի կրնայ շահիլ թրանսպարեն նշանաւոր ոսկույ հանքերէն:

Այս ա՛յս է ազգերու կենաց պայքարը՝ փոքրիկ պետութիւն մ'է, ազգատ է, զիւրքերու տէր չէ, երբէք օտար բռնակալներու նախանձը չի շարժեր իր վրայ:

Փոքր պետութիւն մ'է, բայց հարուստ է, գեղիցիկ աշխարհագրական զիւրքերու տէր է, վատա՛ թող ըլլայ որ այն օրէն դասապատճառ է բռնակալ պետութեան մը ապագայ սեպհականութիւնը դառնալու:

Ո՛հ ապաքէն մարդկանց մէջ իսկ կարողները, հանճարեղներն ու հարուստներն են մտքով, զրիչով կամ դրամով՝ որ աւելի նախանձողէր և հաշտներ կ'ունենան իրենց վրայ:

Բայց եթէ պօէրները կորսնցնեն իսկ անկախութիւննին, իրենց խիղճը հանդարտ է. որովհետև հայրենիքի փրկութեան համար ամեն բան գիտցան զոհել. թրանսպարեն պատերազմը եթէ այսքան սուղի նստաւ Անգլիացուց, պատճառը ուրիշ բան չէ, բայց եթէ Պօէրնեբուն մինչև վերջին շունչ պատերազմելու մարտնչելու անսահման հայրենասիրութիւնն է:

Մինչդեռ Հայուն խիղճը միշտ կը խայթէ, որովհետև նա կորսնցուց իր անկախութիւնը սչ միայն օտար թըշնամիներու նախանձը իր երկրի հարստութեանը վրայ շարժած ըլլալուն. հապա նաև իր իշխաններու և նախարարներուն անհամաձայնութեան և ներքին երկպառակութեանց զոհ երթալուն համար:

Արդարև Հայու անմիաբանութիւնը անոր ամենէն վատթար բնաւորութիւնն եղած է:

Պ. ԳՐՈՒԿԷՐ ԵՐ ՅԵՒՐՈՊԱ

Ինչպէս առաջուց ծանուցած էինք, Պ. Գրուկէր՝ Պօէրնեբուն անվեհեր պետը, Հարաւ-Ափրիկեան հանրապետութեանց նախագահը՝ վերջին յուսահատական ճիգ մը թափելու համար յանուն թրանսպարեն, անցեալ Սեպտեմբերի վերջերը եօթը ամսուան արձակուրդ ստացաւ իր կառավարութեանէն. իրեն հետ առնելով Թուանսպարեն յիշատակարանները՝ կտրեց թրանսպարեն, Լօրէնցո-Մարքէզի սահմանները, անցաւ Ճիպութիէն, Սուէզէն,

Փօռ-Սայիտէն երթալու համար գէպի Յրանսա. ճամբուն վրայ ամենուրեք ականատես եղաւ ժողովրդային համակրական ցոյցերուն. Պ. Գրուկէր չէր տարակուսեր թէ Մարսիլիայի մէջ որքան կրկնապատիկ պիտի ըլլային այդ ցոյցերը:

Արդարև շոգենաւր դեռ չը հասած, Մարսիլիոյ քարափունքը, օթէնները, փողոցները խռուած էին ամեն ազգի անհամար բազմութեամբ:

Վերջապէս 22 Նոյեմբերի առաւօտեան ժամը 8 1/2ին, Գրուկէրը առաջնորդող «Կիլոէրլանտ» պատերազմական շոգենաւր՝ որուն կայմերուն վերայ կը ծածանէին թրանսպարեն և Հրանտական դրօշակները՝ հասաւ Մարսիլիա. Պ. Գրուկէր հաղիւ 11 1/2ին իջաւ ցամաք և թնդաւօթի հարուածներ ողջունեցին իր գալուստը:

Պատգամաւորութիւն մը պաշտօնապէս դիմաւորեց Պ. Գրուկէրը և համակրական ճառեր արտասանուեցան. Պ. Գրուկէր պատասխանելով ըսաւ. «Ժողովրդին այս անսահման համակրութիւնը մեծ յոյս կը ներշնչէ Պօէրնեբուն ազատութեան գործին և կը յուսամ թէ ժողովուրդը միշտ նեցուկ պիտի ըլլայ իմ ձայն լսելի ընել տալու համար յայս օտար պետութեանց. Անգլիոյ նման մեծ ազգի մը կողմէն մեր փոքր ազգին գէմ եղած հալածանքը բարբարոսութեան զատ ուրիշ բան չեմ կրնար նկատել»:

Ամեն կողմէ ծափահարութիւններ, ու ցնծութեան ձայներ կը լսուէին. Պ. Գրուկէրը առաջնորդող թափօրը ճամբայ ելաւ. գէպի Նոայլ Օթէլը ուր իրեն համար արարթըմաններ պատրաստուած էին, Պ. Գրուկէր երբ Օթէլը տը Լուվրի առջևէն կանցնէր, անգլիացիներ հաւաքուած կը սուլէին, ոսկիի և ֆրանքի կտորներ նետելով պատուհաններէն՝ կը ծաղրէին Պ. Գրուկէրը. ժողովուրդը եթէ համբերատար չը գտնուէր անգլիացուց այս գայթակղեցուցիչ արարքին հանդէպ, մեծ արիւնահեղութիւն տեղի կրնար ունենալ. ժողովրդէն մաս մը թէպէտ յարձակեցաւ սուղը անգլիացիներուն վրայ, բայց ասոնք փախան և պահուրտեցան. ոստիկանութիւնը միջամտեց ու ձերբակալեց խռովարարները:

Պ. Գրուկէր մեկնեցաւ Մարտիկոյն զէպի Գ. Գրուկէր. ճամբուն վրայ որ կայարանէ որ անցաւ, իրարմէ ջերմ համակրական ցոյցերու առարկայ եղաւ. կիրակի առաւօտ հասաւ Փայտիչ աւայեղութիւն առաւ Պ. Լուպէի, Թրանսայի Նոյսագահին Պ. Լուպէի ցերեկէն վերջը փոխադարձ այցելութիւն առաւ Պ. Գրուկէրի. այս անակցութեանց միջոցին քաղաքական ու է ինչիւր չը շոջափոխեցաւ Հեանեալ օրը պատեցաւ թու աւելիքէ և քաղաքին մէջ պայտը մը բրաւ կատարով փոփոխեցաւ համակրութիւնն անասման է առ Պ. Գրուկէր:

Պ. Գրուկէր բն. անեց Պ. Ռօֆօրը, խմբող իրեն, պատգամաւորութիւններ, հակաանդրաբան աղերսներ: Բառատուն և հինգ վայրկեան տեսակցութիւն անեցաւ Պ. Տէրքասէի հետ: Պ. Տէրքասէ յայտնեց Պ. Բյուկէրի թէ Թրանսայի կառավարութիւնը ուղղակի նախաձեռնութիւն չը պիտի կրնայ ընել Թրանսայի ինքուրոյն համար, բայց պիտի մասնակցի եղած գիտն մեծուն:

ՁՈՐԻՆ ՀԻՒՆՆԻՍԻՒՄԻՆԵՐԸ

Ձարի հիւանդութեանը մասին բաւական յօդուածներ գրուեցան եւլուպական թերթերու մէջ. մեր ուշուրբութեան հանդիպեցաւ. «Բաթրի» մէջ հետեւեալ աղերս. «Երբևէ Ձարը առողջ կազմի տէր չէ. եթէ Ձարը հիւանդութեանը չ'փրկուելով, մահը խուլէ զանի իր կայսերական ընտանեաց գրկէն, երկու պարագաներ կրնան ներկայանալ. եթէ Ձարուհին յղի է, առօրինայ ինտանակալ մը կ'կարգուի և կ'ապստուի երեխային ծննդեանը, որ եթէ արու է պիտի կոչուի Ձար. և եթէ Ձարուհին յղի չէ հանգուցեալ ձարին օրինաւոր յաջորդը պիտի ըլլայ իր եղբայրը Ձարիկը մեծն զարք Միխայելովիչ որ ծնած է 23 նոյ. 1878ին:»

ՆԱԲՈՒՆԻ ՎԵՐՁԻՆ ՕՐԵՐԸ

Լոնտոնի մէջ հրատարակուած այս գիրքը մեծ ազմուկ հանեց: Հեղինակը Ն. Բրոյպայի ամենանշանաւոր քաղաքագէտներէն մին է, ու անոր անունը միայն կը բաւէ հատարակութեան հետարկութիւնը բացատրելու. Լորտ Ռոզպերին է հեղինակը: Թրանսայիներու համար մանուաւոր Լորտ Ռոզպերիի այդ երկը շատ հետաքրքրական է, որովհետեւ հեղինակը, անդրապի ըլլալով հանդիպած, անոր մէջ նտարդէնի ո՛չ թէ հակակրօթիւն, այլ համակրութիւն ցոյց տուած է:

Հեղինակը նոյն կը խօսի Նաբոլէոնի բանտապահին, ապա իրեն Ս. Հեղինէ կղզոյն մէջ անցուցած կեանքին և մահուան վրայ:

ՆԱԲՈՒՆԻ ԲԱՆՏԱՊԱՋԸ
Եթէ կ'ըսէ, Ս. Բր. Հոյնէ կղզին Թրանսայի օրտն մէջ գաւա յիշատակներ կ'արթնցնէ, մեր ալ անգթութիւնները երևան կը հանէ:

Անդրա՛ պարզաբար այնպիսի ներկայացուցիչներ ունէր հոն՝ որոնք մտացան իրենց ազգային արժանապատուութիւնը և բանտարկեալին բարձր դիրքը: Մեծ ազգ մը այդ առիճան անարգ գէձութիւններ ընելու չէ երբէք: Այո՛, Նաբոլէոնի բանտապահները գէձութեամբ վարուեցան իրեն հետ: Այն որ Անդրապի է չ'ընար առանց վշտի ուսումնասիրել Նաբոլէոնի գերութեան պատմութիւնը, և մենք՝ բոլորս պէտք է ցաւ զգանք որ անգղիական կառավարութիւնը Ս. Հեղինէ կղզոյն մէջ բանտապահութիւնն այնպիսի գէձ մարդոց ձեռք յանձնած էր, որոնք իրան անագին կերպով կատարեցին իրենց պարտականութիւնը:

Տեսէք թէ ինչ կ'ըսէ Ռուլլընի զուրբ Նաբոլէոնի բանտապահին՝ Ս. Բր. Հոյնէն Լոփ մասին:

Հոյնէն Լոփ, կ'ըսէր զուրբ, շատ խելո՞ւ ու կրակ մարդ մ'էր. անդատարակ, գատորութիւն չունեցող, ապուշ, աշխարհէն լուր չունեցող, կասկածոտ ու նախանձոտ մարդ մը:

Կարեօր է այս վկայութիւնը. որովհետեւ Ռոլլընի յարթողը վեհանձն թշնամի մը չէր, և Նաբոլէոն իրաւունք չունէր գանգատելու, վասնզի իր բազմին . . . արեւնացաւ, կ'ըսէր:

Օր մը Մօնթըլոն (*) Նաբոլէոնի միջագային Հոկիչ Մանսիսի ներկայացուցիչ Պ. Թր. Մօնթըլի բանի մը ձերմակ և կանաչ լուրջայի սերնահամար տուաւ, որ պէտք պարտաւր ցանկ. ստոր մէջ կասկածելու ինչ կրնայ ըլլալ. բայց կառավարչը կարծեց թէ գաւալորութիւն մը կար անոր մէջ, և Լորտ Պարթըպի գրած մէկ նամակին մէջ կ'ըսէր թէ «Թեւ չեմ յուսար որ բակասներու մէջ քաղաքական երևոյթ մը ըլլայ, բայց ինձի կուզայ որ եթէ ար Մօնթըլի մարքիլը չ'ընդունը զանոնք, կամ, գոնէ ձերմակ բակասներն առնը, աւելի աղի բրած պիտի ըլլար:

ՆԱԲՈՒՆԻ ԿԵԱՆՔԸ Ս, ՀԵՂԻՆԷ ԿԻՉԻՍԻՒՄԻՆԵՐԸ

Ճիշդը խօսած ըլլալու համար, Լոնդոնը ար կը բնակէր Նաբոլէոն, իրձիթներու կոյտ մ'էր. բամին միշտ վշտով կ'աւելը զայն, խոնաւ էր հոն և անասուեր . . .

Մեծափարձամ պարտաներու մէջ ապրող աշխարհակալը երկու հաւասար փայտի կասրնեու մէջ կ'իկուած էր:

Իր բոլոր աշխարհակալութիւններուն, իր բոլոր փառքերուն և յաղթանակներուն վերջը այս եղած էր: Իւրաքանչիւր սենեակ երկու նեղ պատուհաններէ լոյս կ'առնէր: Սենեակներէն միայն անկիւնը կանաչ մետաքսայ վարագոյրներով զինուորական անկողին մը կար, այդ անկողինը Մարտիկոյն և Օսթրիլիայի պատերազմներուն մէջ գործածած էր: Իրան գիմաց հողմալան մը գրտած էր և այս հողմալանին ու վառարանին միջև հին յօժաւ մը կար սրուն վրայ նստած կ'անցընէր Նաբոլէոն օրուան մեծագոյն մարդ:

Պատերը նանկինեան գոյնով մը ներկուած էին, և իւրաքանչիւր պատի եզերք արծաթագոյն նեղ շրջագծեր գծուած էին, որոնք պարզութիւն ու շքեղութիւն մը կուտային անոնց: Պատերէն կախուած էին Մարտիկոյնի (**) և Հոյնի թագաւորին սրտեկեր:

(*) Այս գործարարը (1782—1853) Ս. Հեղինէ կղզուց մէջ Նաբոլէոնի ընկերք էր: Ե. Բ.

(**) Նաբոլէոնի կիսն էր ասիկա որ ամոր ողջութեամբ Նէյթերկի կոմսիմ Ռետ գէշ յարաբերութեամ մէջ էր:

ները: Ուրիշ սեղ մը, նոյնպէս այս վերջնոյն կիսանձեայ մէկ պատկերը և Ժողովինի մէկ մանրանկարը. ժամացոյց մը. ասոնք էին պատին ամբողջ զարդերը:

Միւս սենեկին մէջ կային գրասեղան մը, քանի մը պզտիկ սեղաններ, և ուրիշ անկողին մը որուն վրայ կայրը հանգիստ կ'առնէր սովորաբար:

Նաբոլէոն ընդհանրապէս կոնկաւոր, որսորդի պարեգօտ մը, ձերմակ գազմիւրէ անգրավարտիք մը և գոյլայ կը հագնէր, ու երբ այս գրեւոր կը մտչէր, միւս կողմը կը դարձնէր որպէսզի անգղիական զգեստ չ'հագնի . . .

Կայրը մինակը ժամը ասանդակին կը նախաճաշէր. ցերեկը ժամը երկուքին կը հագուէր, եօթին կը ճաշէր. բայց այս ժամերը երբեմն կը փոխուէին: Ատեն եկաւ որ ալ նախաճաշ չէր ընէր. ժամը երեքին կը ճաշէր, ասոնին կ'ընթերցէր:

Նաբոլէոն վեց ձի ունէր. լծել կուտար կարգին և ինը կը վարէր զանոնք: Անոնապետ մ'ալ ունէր որ գրնեռուն կը հսկէր . . . տան ներսն ալ կարգուէր աղիկ էր: Իր շուրջը գտնուողներուն մէկը առանց կանչուելու իր սենեակը չէր մտնէր: Եթէ իրեն ըսուէր կարեօր բան մը կար, պէտք էր նախ իր մէջ ունկնդրութիւն խնդրել: Պրտոյտի ատեն հետը մարդ չէր երթար: Մարդ հետը պէտք չէ որ խօսէր, եթէ իր սենեակը հրաւիրուած չէր, ու անոնքն ալ անոր ներկայութեանը զիջուց կը կենային. բայց վերջէն Անգղիացիք որոշեցին որ առանց պիտակ հանելու խօսին իրեն հետ:

Կերակուրի ատեն կանաչ և սոկեղոյն գրեւորներ հազուած ֆրանսացի սպասուարներ՝ ոսկի և արծաթ սնակներով կ'ապասուարէին . . . Իր ընդմիջում տեղ մը պարպ կը մտար. կայսրուհոյն կը անի . . . Կայսեր սնակները շատ էին, բայց ճաշը իր հին սովորութեան համեմատ՝ կարճ կը տւէր: Բարեկաւ թիւրքի պալատին մէջ բնան վայրեանէն կը ըմտար, ի Ս. Հեղինէ հինգ վայրէջան աւելի ժամանակ տրւած էր . . . կայրը, որպէսզի Պարթոս ժամանակ ունեւայ աղանդեր ստուլու . . .

Այս պերճ ոճը շատ մը անձանց անհեթեթեմ երկի թերևս, բայց երբ խորհինք անոր վրայ՝ պիտի տեսնենք որ միլիարդաւոր համակրութիւն մը կը ներշնչէ ան: Կայսեր շուրջը պատող պահապան սպաները միշտ կ'ըսէին թէ՛ հակառակ այս ամենուն, ինքը միշտ վեհապետն էր իրենց . . .

Կաշմուրը մեծապէս կ'ուրախանար, երբ գիրք կուզար իրէ: Այն ատեն ժամերով կ'առանձնանար զանոնք լափելու համար: Ինք չէր ուզեր գրել բայց իրարու ետեւ շարունակ կ'ըսէր որ գրէին: Նաբոլէոն ճառարակ և քննադատ գրեւոր խաղալ: Ճառարակի մէջ անյաջողակ էր, և ինչ խաղ որ խաղար՝ խաղաբարութիւն կ'ընէր առանց պահելու, ու կը խնդար իր ըրած խորանքին վրայ. բայց այդպէսով իրեն շահած գրամը՝ երբէք չէր ընդունիր . . .

Իր գրօսանքներէն մին էր բարձրաձայն կարգալ. թէպէտ շատ չէր կարգար, բանաստեղծական գրածքները մասնաւոր: Ոգրեղբորութիւնը շատ կը սիրէր և միշտ Գորնիլ կը կարգար:

— Ամենքն աւելի ոգրեղբորութիւնը կը սիրեմ, կ'ըսէր նա, ճառի մը մէջ, ֆորնէյի ոգրեղբորութեանց վրայ խօսելու ատեն:

Աստուածաշունչ կը կարգար յաճախ, և երբեմն ալ Հոմերոսի կամ Վիրգիլու, Էքիլուսի կամ Էրիթուսի թարգմանութիւնները: Շատ կը սիրէր նաև Վիրգիլի Չայիքը

(այս ալ ոգրեղբորութիւն մ'է 1732ին հրատարակուած):

Նաբոլէոն ընթերցատըր եղած է միշտ: Պրիէնի մէջ զգրուցական եղած ժամանակ վարարանին մատենապարանապետը նեղը կը գնէր իրարու ետեւ գիրք ուզելու: Երբ որ Ժողովինի (Նաբոլէոնի կինը) հետ կը ճամբորդէր որչափ որ նոր գիրք կար, իրեն հետ կը տանէր: Վաթերլոյի մէջ անգամ հետը ո թը հարիւր կտոր գիրք ունէր որոնց մէջ կային Աստուածաշունչ, Համերոս, Օսեան, Պոսիէ և Վիրգիլի եօթամասուն հատորները: Երբ Նաբոլէոն իր հրատարակարը (1814 և 1815) առաւ, երեք օր վերջը անմիջապէս գրեիր . . . յանձնարարեց:

Ս. Հեղինէի մէջ մեծակեցութեան ատեն ամեն բան — Պատմութիւն, փիլիսոփայութիւն, ռազմագիտութիւն, յիշատակարան — լափելով կը կարգար: Այս վերջին երկերէն միայն, մէկ տարուան մէջ եօթմասուն և երկու հատոր կարդաց: Չէ թէ միայն կը կարգար, ապա իր նոթերն ու ընդապատականները կը գրէր կամ գրել կուտար:

ԿԱՅՍԵՐ ՄԱՋԸ

Նաբոլէոնի մահը բնական էր որ այդ գերութեան մէջ շուտ վրայ պիտի հասնէր, թեև իր վրայ հսկողները չէին ուզեր այդ Արնօզ կայսեր մահէն (1821) 35 օր առաջ եկած ըլլալով հասկցած էր անոր հիւանդութեան ծանր ըլլալը, բայց չէր հաւատար թէ անոր մահը մտածեցած էր: Ապրիլ 27ին միայն հասկցաւ որ հիւանդութիւնը մահացու էր: Թէ՛ Սըր Հոյսըն Լոփ, թէ՛ անգղիական կառավարութիւնը լաւ գիտէին որ վախճանը մօտ է:

. . . Լոնկոնի մէջ Նաբոլէոնի հետ բնակողները կատարեցին յօդարկաւորութեան հանդէսը: Թափօրին ետէն գնացին Հոյսըն Լոփ, ար Մօնթըլի և Ս. Հեղինէ կղզոյն բոլոր քաղաքական ու զինուորական վարչութեանց պետերը: Երբ մարմինը հող գրին հրազեններ արձակուեցան:

Լորտ Ռոզպերի մեղամաղձաւոր համակրութեամբ մը Նաբոլէոնի բանտապահներուն գէձութեամբ վարմունքները, անգղիական կառավարութեան տմարդութիւնները երևան հանելէ ու անոր Ս. Հեղինէ կղզոյն մէջ անցուցած արգահատելէ ու սրտակուտըր կեանքը պատմելէ վերջ, նոյն համակրութեամբ ու յարգանքը Նաբոլէոնի վրայ իր գատորութիւնները կ'ընէ այսպէս:

Պօնաբարդ իր հիւպատոսութեան (1802) ժամանակամիջոցին, կ'ըսէ նա, այնպիսի մարդ մ'էր որուն նմանը տեսնուած չէր: Վարժ, ճարտարամիտ, խորագէտ, գործօն և արգարաւեր էր նա: Միշտ զարգանալ կը փափարէր: Գաղաքական վարչութեան մէջ իւր ազիտութիւնը չէր ծածկել: Երբ գիտական բան մը կամ գաղափարական ու է օրէնք չէր գիտեր, նշանակութիւնն հարցնելու կամ բացատրութիւն պահանջելու չէր ամալար: Բայց երբ որ Տերութեան բոլոր խորհրդականներուն ու նախարարներուն իրեն սորվեցուցածներն ուսաւ, հասկցաւ թէ իրեն հետ եղողներէն անհամեմատ կերպով բարձր էր ինք, թէ կառավարական ու պատերազմական մեծ հանձար ունէր: Այսպէս ալ համոզուած էր, որովհետեւ Թրանսան առանց հաշուելու, քննելու ամեն զօրք և գրամական միջոց իրեն վստահած էր: Այս համոզումը իր սրտին մէջ ծնաւ նախ յողորդ, ապա հսկայ և անիրականապի փառասիրութիւն մը:

Եթէ աւելի գգուշութեամբ գործէր, եթէ

իր ձեռքն անցուցածները պահպանել պիտ-
ուար. գծուար պիտի ըլլար գուշակել թէ ո՞ր
աստիճան պիտի կրնար իրականացնել իր
խորհուրդները, բայց իր կայսրութիւնը այն-
քան արագ բարձրացուց որ չուզէր վար-
կեան մ'անգամ կանգ առնել իր գործին
վրայ, ու չ'ընդունար զայն զորով որ չուզէր
պահանջուիլ.

Քացել իրաց կ'ընէր թէ գործի մարդ կուզէր
ինք. ո՛չ թէ նախարար. թէև վստահ էր
որ իր աշխատակիցները չեն կրնար զինք
որոգայթի մէջ ձգել, բայց բարձր ընդու-
նակութիւն ունեցող մարդոց փառասիրու-
թիւնն ու քննադատութիւնն կ'զգուշանար.
Երկու անձնաորութիւններ, որոնց բարոյա-
կան արժանիքը թէպէտև վիճելի, բայց իւ-
րեանց մտաւորական անուրանալի կարողու-
թիւններով երկար տարիներ իրեն իշխանու-
թեան տակ պաշտօն վարելով, մեծապէս
նպաստեցին իր կայսրութեան. Նաբոլէոն երբ
տեսաւ որ հասարակութիւնը այդ անձնաու-
րութիւնները Ֆրանսիայէ և թալարան՝ անհրա-
ժեշտ տարր մը կը համարէր, շուտ մը պաշ-
տօնանկ ըրաւ զանոնք և տեղերը առանց
տաղանդի մարդիկ կարգեց:

Նաբոլէոն իր առաջին տարիներուն մէջ
մանաւանդ՝ կ'արգահատէր իր ընտանիքին
վրայ և կը սիրէր, կը յարգէր իր մայրը
և կը բարեբարէր իր բարեկամներուն.
Բարի ամուսին մ'էր, կը պաշտէր իր որդին,
կը զուգորտոր եղբայրներուն վրայ. բայց
իր թագաւորութեան վերջին տարիները Տիւ-
րքի (Ֆրանսիայի զօրավար, կայսրութեան
ատեն մեծ բզեշի) մահուանէ ետքը՝ ալ բա-
րեկամ չ'ունեցաւ:

Միշտ հանդարտ բնաւորութեան տէր և
կասկածոտ եղաւ. «Հակառակութիւնը իմ
պաշտօնիս համար կարեւոր է», կ'ըսէր նա.
«Վիպասանութիւն մ'եղած է կեանքս» բա-
ցական շեշտ ուրիշ օր մը. «Շատ շուտ պիտի
մոռցուիմ... պատմութիւնն ալ չ'պիտի յի-
շատակէ գիտ. որովհետև յաղթուեցայ»: Ա-
պագային երկուրդ, անցելոյն մեղադրանք-
ները, կեանքի շահախնդրայն միտքի սակու-
թիւնը անդադար այրեցին իր սիրտը. Վեց
տարի շարունակ մեռածի պէս էր:

Նաբոլէոնի փառքը շատ մեծ էր. ամեն
համբաւ չահեցաւ. իր գաղթն առաջ ոչ ոք
կրնար հաւատալ թէ՛ զեւրոպական և քաղա-
քական հանճարը՝ հոգւոյ և մարմնոյ այնքան
սքանչելի կենդանութեան մը հետ կրնար
միանալ. Նաբոլէոնն զատ ուրիշ մարդ չ'ու-
նեցաւ անքան կարողութիւն, մեծութիւն, և
աղիւզամբ վարեան... Գերմանիայի
մտաւոր կարողութիւններ գործածելով բարձ-
րացաւ, միևնոյն ձիւրքերը շարաշար գործած-
ելով կորուսեցաւ: Իր անհեթեթ հանճա-
րը ընդգրկեց իր կորուստը, բայց այս կո-
րուստը պատճառեցին այն գործութիւնները՝
որ ոնք բարձրացուցին զինք:

Եւ այսպիսի լուրջ հեղինակութիւն-
ներ, անկողմնակալ ոգուով գրուած
ուսումնասիրութիւններ և քննադատու-
թիւններ անզղիակալ գրականութեան
էն լաւ նրկարագիրն է ու անոր մէջ էն
մեծ տեղը կը գրաւէ:

ՎԱՀԷ

ՎՐԻՊԱԿԻ

«Նոր-Օր»ի նախորդ թուի խմբա-
գրականի ամենէն վերջին տողի «իր օ-
գուտն է» կարգալ «իր փափաքն է»
Նայնպէս միևնոյն թուի երրորդ է-
ջի երկրորդ սիւնակի առաջին տողին
«կառավարու»-նէն վերջը կարգալ նոյն
սիւնակի 29րդ. տողէն սկսեալ չորս
տող:

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն

Եզրկատուի նորընտիր Առաջնորդ,
Գեորգ. Յովսէփ եպիսկոպոս Այվազ-
եանի գալուստը ուշացած է, որով-
հետև ցաւօք կ'իմանանք թէ կ. Պոլ-
սոյ Պատրիարքարանի գործակատա-
րութիւնը աններելի դժուարութիւններ
յարուցած է Սրբազանի մեկնելուն
գէմ. մինչև իսկ կ'ըսուի թէ 30 ու-
կուց գումար մը պահանջուած է Սրբ-
բազանէն որպէսզի ազատ թողուի
մեկնելու յԵզրկատու, իր պաշտօնա-
տեղին:

Չենք կարծիր որ այդ գումարը
(առջվաթ) Պոլսոյ Պատրիարքարանի
գործակատարութիւնը պահանջած ըլ-
լայ: Թեքևս ոստիկանական նախա-
րարութեան բարձրագոյն պաշտօնեա-
ներէն մին եղած ըլլայ այդ օրինակ
առաջարկ մը ընողը: Սրբազանը չէ
հաճեր գոհացնել այդ որկրամոլները
և ատոր համար է որ իր գալը ցարդ
յետաձգուած է:

Կը փութանք յիշեցնել Լսարան-
էնթերցատան արդոյ անդամոց թէ
վաղը կիրակէ կէս օրէն վերջը ժամը
2ին տարեկան Ընդհ. Ժողովոյ 7րդ.
նիստը տեղի պիտի ունենայ «Միու-
թիւն» տպարանին կից շէնքին մէջ:

Տիրապիղծուէն Նոյ. 2 թուականաւ
«Արեւելք»ի կը գրեն թէ, նոյն օրը
առտուն կանուխ յիշեալ քաղաքին
մէջ ահուելի ու քստմեծի ոճիր մը
գործուած է: Չորս հինգ ասորիէ ի
վեր նոյն տեղը հաստատուող կիրիւ-
ցի վաճառականի մը 24—25 տարե-
կան կինը՝ վարդանուշ Մառանեան,
երկու զաւակներու մայր ըլլալով հան-
դերձ, իր չար նախանձու գազանային
զգացման գոհացում տալու համար,
9 տարեկան խորթ աղջիկը խողովոզ-
ած է դանակով:

Հապէշխատանի Մէնէլիք կայսեր
ազգականներէն Պատո իշխան որ մէկ
ամիսէ ի վեր Երուսաղէմ կը դանը-
ւէր, իրեն ընկերացող պալատական 10
Հապէշ պաշտօնեային ի հետ երբ Յուդ-
պէ եկեր է Ֆրանսական «Գասարտ»
չոգենաւով գէպի Մասսուա մեկնելու
համար, հոն նաւամատուցին վրայ Ն.
Բարձրութեան ներկայացրեր են Տ.
Գարեգին և Տ. Սերովբէ վարդապետ-
ները և Յուդպէի Հայոց վանքին թարգ-
ման Տիար Գէորգ Թորոսեան, Երու-
սաղէմի Տ. Յարութիւն պատրիարքի
կողմէն ողջերթ մաղթելու համար:
Իշխանը ցաւ յայտներ է Տ. Յարու-
թիւն պատրիարքը Երուսաղէմի մէջ
տեսնել կրցած չլինելուն համար և
ինչորք է վարդապետներէն որ իր
չնորհակալութիւնները մատուցանեն
Նորին Ամենապատուութեան, Երու-
սաղէմի Հայ հաստատութիւններուն մէջ
իրեն եղած ընդունելութիւններուն և
պատիւներուն համար:

Կրթասէր Պարսիկ մը 1000
րուպի նուրբեր է էլ միաձնի Ճեմա-
րանի աշակերտներու պէտքերուն հա-
մար:

ՎԱՅՐԱՎ ՍՄՈՒՍԻՆ

Էնկիւրիի Աեաշ գաւառակին մէկ
գիւղին մէջ սոսկալի ոճիր մը գործ-
ուեր է: Հիւարըզողը Մուսթաֆա ա-
մուանացած ըլլալով հանգերձ երկրորդ
անգամ կ'ամուսնանայ Խասիլէ անուն
աղջկան մը հետ: Գիշ ժամանակ վեր-
ջը այդ աղջկան հայրը կը մեռնի և
անոր կալուածները կը ժառանգեն
Խասիլէ ու երկու եղբայրները: Մուս-
թաֆա՝ Խասիլէին ունեցածը վատնե-
լէ ետքը, զայն կը սպաննէ հետեւեալ
պարագաներու մէջ. —Մուսթաֆա,
իր միւս կնոջ հետ համաձայնելով,
Հոկտ. 29ի գիշերը, առտուն դէմ,
Խասիլէին վիրջ չուան մը կ'անցնէ և
քաշկուտելով պարտէզ կը հանէ և ծա-
ռի մը կը կապէ. ձեռքի հրացանովը
խեղճ կինը կոնակէն ծանրապէս կը
վիրաւորէ, ատով ալ չի բաւականա-
նար՝ դարձեալ տուն կը տանի և դա-
շոյնի հարուածներ տալով Խասիլէի
կուրծքին, սիրտին ու գլխին, կը ըս-
պաննէ զայն: Մուսթաֆա խեղճ դի-
ակը քաշկուտելով տունէն դուրս կը
հանէ մօտակայ լիճ մը նետելու հա-
մար, բայց առտու եղած ըլլալով,
զրայինները կը տեսնեն ու կ'ուզեն
զայն ձերբակալել, սակայն ոճրագործը
կը փախի և լիճին միւս կողմը գլու-
նուած գիւղը կ'երթայ, ուր կը բնա-
կէր Խասիլէի մեծ կըրայրը Խալիլ որ
տեղւոյն իմամն է: Մուսթաֆա կ'ըսէ
անոր թէ ձեռքէն վտանգ մը ելած է
և կը խնդրէ որ զինքը ազատէ գիւ-
ղացիներուն ձեռքէն: Խալիլ անմիջա-
պէս իմաց կուտայ Աեաշի գայմագա-
մին և վերջապէս ոճրագործը կը ձեռ-
բակալուի: Մուսթաֆա խստովանած
է իր գործած վայրագ ոճիրը:

ԱՐԵՒԵԼԻՔ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ՉԻՆԱՍՏԱՆ. — Լոնտոնէն Նոյ. 27
Թուակիր եկած հեռագրի մը համա-
ձայն Բէքինէն «Թայմ»ի կը գրեն թէ
Չինաստանի վճարելիք տուգանքը է՛ն
քիչը 60,000,000 անգղիական ոսկոյ
պիտի հասնի:

—Լորտ Ռոպըրթսի դէմ սպաննու-
թեան փոճ մը կատարուեր է. այդ մա-
սին ինք ձեռնադրուէն կը հեռագրէ
թէ կառավարութիւնը 9 խտայցի ու
յոյն և մէկ ֆրանսացի ձեռքակալած
է արդէն և դատի պիտի ենթարկէ:

—Ռուսիա Անգղիոյ ըսած է որ ետ
կը մնայ իւր ճամբէն և Շան-Հէ-Ուան
չ'երթար, եթէ իրեն ըրած ծախքերը
հատուցանէ:

—Ուիլհէլմին թագուհւոյ ամուսնու-
թիւնը վեջնականապէս առաջիկայ
Յունվար 31ին սրջուած է:

—«Տէյլի Թէլէգրաֆ»ի Վաշինկթընի
թղթակիցը կ'ըսէ թէ Պ. Մաքքինլիի
յայտարարած է որ, եթէ Եւրոպական
տէրութիւնները Չինաստանը բաժնեն
իրենց մէջ, Միացեալ-Նահանգն ալ
վաճառականական նաւահանգիտտ մը
պիտի գրաւէ: Վաշինկթընի Ռուսա-
կան հիւպատոսը՝ կոմս Բասսինի «չը-

բալտ»ի մէջ կը յայտարարէ միևնոյ ժա-
մանակ թէ Ամերիկա ու Ռուսիան հա-
մերաչխ են Չինաստանի մէջ:

ՆՈՒԱԳԻՐՆԵՐԷ ՔԱՂՈՒԱԾՔ

Լոնտոն 29 Նոյ.
ՉԻՆԱՍՏԱՆ. — Չինաստանի մէջ
գտնուող գաշնակից բանակը կը բաղ-
կանայ 7500 Անգղիացի, 25000 Գեր-
ման, 15000 Ֆրանսացի, 15000 Ճա-
բոնցի, և առանց հաշուելու Մանչուրիի
մէջ եղողները՝ 3000 Ռուս զին-
ւորներէ:

Փարիզ 29 Նոյ.
ԲՐՈՒԿԷԼ. — Այսօր 1. Գեկտ. Գը-
րուկէր Պերլին պիտի մեկնի:

ՉԱՐԼ. — Չարը որուն հիւանդու-
թիւնը առաջուց ծանուցեր էինք,
հանգիստ կը քնանայ, և օր ըստ օրէ
վիճակը կը բարւոյի:

Լոնտոն 29 Նոյ.

Պերլինէն «Սթանտարտ»ի կը գրեն
թէ՛ Գերմանիան Միացեալ-Նահանգ-
ներու ըսած է որ պատրաստ է Չինացի
գլխաւոր յանցաւորներու զիստուով
պահանջելու ինդիքէն ետ կենսալու:

Տ Ե Ղ Ա Կ Ա Ն

Ն. Վ. Պոլոս փաշա Նուպար՝ եգիպ-
տական Ազգ. Դրամատան վարչական
ժողովոյ որոշմամբ՝ Աղբթանդրիա պի-
տի իջնէ Ռամէլի երկաթուղոյ գոյ-
քերը աչքէ անցնելու և իր քննու-
թեան արգիւնքը ժողովին հաղոր-
դելու: Շոգիին տեղ եթէ պէտք տես-
նէ, երեքտրականութեան գործածու-
թիւնը այդ մասին ալ իր կարծիքը
պիտի յայտնէ:

—Հելլենական կառավարութիւնը
Եգիպտոսի նահանգներուն համար դը-
րած 10 օրուան քառասնեակը (քա-
ռանթինա) 48 ժամուան իշխուցած
է, և մօտերս բոլորովին պիտի վերցնէ:

—Ռուսոմի վարչութիւնը Հասա-
րակաց գործոց նախարարութեանէն
3500 եգիպտ. ոսկի պահանջած է ձի-
զերէն ըւրդերը ջրի խողովակներ
դնելու համար:

—Ճիստէն եկող և Պոլիս գացող
«Աւանա» թուրք շոգենաւը Նոյ. 27ին
Սուէզ հանգիստի է, որուն մէջ 1231
զօրք ու սպայ կայ եղեր:

—200 Ամերիկացի զբօսաշրջիկներ
կ'սպասուին Գահիրէ Գեկտեմբեր ամ-
սոյ մէջ:

—Տեղական թերթերը պահանջե-
ր են որ թերթերու թղթատարական
ծախքէն իրենց զեղջ մ'ըլլուի: Կառա-
վարութիւնը դեռ պտտասխան մը տը-
ուած չ'է:

—Օսերայի կարգադիր Մանսխու-
բը խմբագիրներու թատրոնի մէջ ձրի
մուտքը մերժած է: Խմբագիրները այս
որոշման դեմ սաստիկ կը բողոքեն:

ԲԱՑ ՆԱՄԱԿ

(Շար. մախորդ թիւէն եւ վերջ)

Կը զարմանամ որ Պ. Պ... էր գըր-
չովը թէ ինքզինքը կը դատապարտէ
և թէ իրենները, բնելով թէ «իմ
գրածս նոյնն է, սա տարբերութեամբ
որ քարոզի սիլ երջանը սեղիսէն յը-
զարըր»։ Թէ մեր ըսածը և թէ ժո-
ղովրդեան համոզումը միթէ այդ չէ՞ր.
անգամ մը գոնէ ինձ առաջարկուէր
թէ ի նպաստ հիւանդին ներկայա-
ցում տալու մտադրութիւն կար, ո՞վ
կը գիմարէր արդեօք այսպիսի բա-
րենպատակ առաջարկի մը գէ՞մ. նա-
մանաւանդ հիւանդ արհեստակցի մը
համար որու յառաջդիմութեանը այն-
քան հոգ և խնամք տարած եմ։

Ընդհակառակը, իմ թատերական
ներկայացում կազմակերպելու իմա-
նասնուն պէս, սկսուն շուտ մը ազդա-
րարութիւններ հրապարակ հանել, և
կարգ մը իմաստակ հրատարակու-
թիւններ որոնք փողոցային թեր-
թերու մէջ միայն կրնան տպուիլ,
կարծեցին թէ հանրութեան դուրը
կրնան շարժել։

Բայց դարձեալ օգնողը ես եղայ,
առանց մեծ խօսելու. վեհանձնու-
թեամբ ես կեցայ իմ կազմակերպած
թատերական ներկայացումէս, առանց
մեղքնալու կարգ մը ծախքեր զոր
ըրած էի այդ առթիւ. բաւական է
որ ի նպաստ հիւանդին ներկայացու-
մը տրուի, և անոր հասոյթը իր հաս-
ցէին զործածուի։

2. Պ. Պ... իմ և Պէնլեաններու
ներքին յարաբերութիւններովը զբա-
ղել չուզեր եղբ. ըսել է փախուստ
կուտայ. սա ինչ չուտ. ինքն ալ գի-
տէ որ տակէն ելլալը զժուար պիտի
ըլլայ։

3. Պէնլեաններէ փոխանակ 75 դա-
հեկանի 35 զըշ-ի պահանջը մը ու-
նիմ գրած էի սխալմամբ. յայտարա-
րելով թէ այդ գումարը պատրաստ
եմ զոհելու իմ արհեստակցին սիրոյն
համար, թէպէտ քանակութիւնը բան
մը չէ։

Առնելիք մը զոհել և կամ զոհո-
ղութիւն ընել մէկուն, ինչպէս կ'ըլ-
լայ. պիտի ինքզին Պ. Պ...ն որ
ինձ սովորեցնէր զօհողութիւն ընելու
եղանակը, եթէ ինք օր մը ուրիշի մը
համար զօհողութիւն ըրած է. . . նէ։

Պ. Պ... մեզի կը թողու համա-
ձայնիլ և այս գործին մէջ միանձի-
թիւն ընելու կը վստահայ, որ մի
գուցէ . . .

Արդէն այս չնչին գումարին հա-
մար չէր որ Միւս Պէնլեանը (ոչ հի-
ւանդը) սպառնալիք ըրաւ ինձ ու ան-
վայել խօսքերով նախատեսց զիս. մին-
չև անգամ իմ մեռելիս ուզեց. այս
միջոցին արտասանած թըքական լեզ-
ուով հայտարարեց զիտեմ որ «Նոր-
Օր» չը տպուի և կը ջնջէ, զանց կ'առ-
նեմ. բաւական է որ ժողովուրդը կուտ-
հեց։

4. Գալով 60 դահեկանի գումարին,
կը ցաւիմ ըսելու որ իմ առջի գրու-

թեանս մէջ վասն նրբութեան գոց
անցած էի, բայց քանի որ ստիպե-
ցիք, կ'ըսեմ թէ Պէնլեանը այդ գու-
մարը իւրացուցած է, որուն համար
վկայ են Տեարք Իսաղուլեան և Եր-
զնկացեան. զրպարտութիւն մ'է այս
թէ ճշմարտութիւն։

Պ. Պ... իմ գործերս զիս վարկա-
րեկ չեն կրնար ընել. լաւ գիտցէ՛ք.
Թերևս ձեր գործերը որոնք հրապա-
րակին ծիծաղը շարժած են։

5. Քառասուն տարուան դրուատելի
արարք մը կրնայ փոխուիլ եղբ. զարմանալի է. մարդ մը Հալէպ ե-
ղած ժամանակ Շամ գալով ուրիշ
բնութիւն կ'զգենու. ո՞վ գիտէ զուցէ
կլիմայի ներգործութիւնները և
խօսքը ես. 73 քալած քաղաքներուս
կլիման զիս չը փոխած, ասկից վեր-
ջը չեմ գիտեր. մեզք գրչին ու մելա-
նին. թող շարժի տեսներք. ա'լ պա-
տասխան չունիմ. ինչպէս յայտա-
րարուած ներկայացումներու տնօրի-
նութիւնէն հրաժարեցայ, որուն Պ.
Պ... վեհանձնութեան զոյգում անունը
կուտայ, որուն աւելի յարմար անու-
նը զուտանք է։

Որոշումը ընթերցողին։

6. Եթէ գերասանին քաակին վնա-
սելու կէտ մը կայ, ան ալ գուցէ
Եւրոպացի գերասանաց համար է, որ
զուցէ երբեմն կրնայ լեցուն ըլլալ. . .
(բացատրութիւնը երկար է)։ Ասկից
զատ, Գահիրէի ազնիւ հասարակու-
թիւնը, (սողորմ իր տէֆա էզան)
փորձով տեսաւ թէ, հիւանդութեամբս
հանգրձ 4 ներկայացմանց երկուքը,
առաջինները յատկացուցած եմ բա-
րենպատակ նպաստներու, որոնց պատ-
ուտար վկայագրերը գեւ ըովս են։

Թ. ՖԱՍՏՈՒԼԻԱՃԵԱՆ

Le Gérant J. MUNIER

Տպա. «Միութիւն».— Թ. Ս. Փափագիսնի

ՊԱՆԳ ԼԻՕՆԷԶ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՐԾԱԿԱՆ ԵԳԻՊՏՈՍԻ

Մ. ՍՍՍՕՅԵԱՆ

Լիոնի հանրաժանութի գրամատունը,
այս անգամ ունեցաւ իւր Երգչատար
գործակալնալ, Տ. Մ'Կրտիչ Սօսոյեան,
որ իւր հրապարակային ցոյց տուած
պարկեշտ գործունէութեամբն ամե-
նուս վստահութիւնը կը վայելէ։

Սոյն գործակալութիւնը, ԱՂ Սեպտ.
թիւ իրեն յանձնուած և Լիոնի բաղա-
քապետութիւնէն պաշտօնապէս վա-
ւերացուած փոխտնօրդարի համա-
ձայն, պիտի կատարէ Պանգ Լիոնէզի
միջոցաւ ամեն տեսակ գրամատիկ և
Քոնստի Ֆօնտիլէի, վիլ աը Բարիի և
Գաղղիական ամէն արժեթուղթերու
գործողութիւններ, գոնձաւեցիք յիմա-
կան չնչին գումարի մը խնայողու-
թեամբ ձեռք կը բերուի քիչ ատենէն,
պտհետի բաժնեթուղթ մը, վիճակա-
հանութեամբ երաշխաւորուած։

Փափարդները հաճին զիմը Նիւ-
պոսի վրայ փաստարան Ռարթաքիի
գրասենեակը։

Թղթակցութիւն և կամ դրամ զըր-
կել հետեալ հասցէին։

Մ. ՍՍՍՕՅԵԱՆ

Ի ԳԱՀԻՐԷ

ԱՏԱՆԱԲՈՅԺ

Պ. ՆԻԿՈՂԻՍՈՍ

Վերջերս հաստատուած ի Գահիրէ,
Գաֆէ աը լա Պուրսի կից, Բ. յարկ,
թիւ 9 դասիկոնը։

Կը բժշկէ բերնի և ակուսի ամեն
տեսակ հիւանդութիւնները։ Աղքատ-
ները ձրի կը դարմանէ ամեն օր, ա-
ռաւտան ժամը 8էն 9։

ՊԵՆԱԵԱՆ-ՇԻՇՄԱՆԵԱՆ ԸՆԿ.

ԱՄԵՐԻԿԵԱՆ ԴԵՐՁԱԿՆԵՐ

ԱՐԱՆՑ ԵՒ ՏԻՎԱՆՑ

ԵՒ ԶԵՆԱԳԻՏՈՒԹԵԱՆ ԴՊՐՈՑ

Ապիքի մեծ պողոտային վրայ Տայլուայի
Սանիթի դիւսքը, 6 սիկին ելեկտրակ սն
գործիւնու վսեմ ստուկը։

Վերջերս Ամերիկայէն հօս եկած
հաստատուած ըլլալով կը յայտարա-
րենք արդոյ հասարակութեան թէ՛
պատրաստ ենք զօհայնել մեզ զիմոյ
Պատ. յաճախողները, գործի մար-
բութեան, զինքու. չափաւորութեան
և ճշ պատահութեան կողմէն։

Սեր գործատուներն մէջ կ'աւան-
դուին նաև ձեռագրութեան դասեր
ամերիկեան ամենալեզնի կատարե-
լագործուած մէթոտով,

Մանրամասնութեանց համար գիմել
մեր դարձաւեցին։

ՃԱՅԱՐԱՆ ՀԱՅՍԱԿԱՆ

ՄԻՀՐԱՆ ԵՒ ԵՂԲ. ԳԱԶԱՆՃԵԱՆ

Շարա Ապու-Սապահ

Նիւու-Տիբիսիսի դիւսքը

Օգտաւն ու զուարճալի գիրք մա-
քուր ու վայելչ սպաս. համեղ ու
աննդարար կերակուրներու զանազա-
նութիւնն, անխարդախ պատրաստու-
թիւն. ճոխ ճաշացուցակ մը զիւրա-
մասչի զինքուով ահա՛ Գազանձ-
եան եղբարց ճաշարանը։

Ով որ կ'ուզէ, փորձի համար մէկ
անգամ թող գիմէ, փաստ պէտք է
ըլլայ թէ մշտակայ յաճախողը պիտի
գառնայ հայկական ճաշարանին։

Տ Պ Ա Ր Ա Ն



Ի ԳԱՀԻՐԷ

Ա.ՊՏԻՆ ՓՈՂՈՑ. ՄՈՒԳԱԹԹԱՄԻ ՃԻՇԴ ԴԻՄԱՑ

ՏԷՐ ԵՒ ՏՆՕՐԷՆ

ԹՈՒԳՈՄ Ս. ՓԱՓԱԶԵԱՆ

Սոյն նորակազմ տպարանին մէջ կը տպուին հայերէն ու եւրոպական լեզուաւ ամեն տեսակ հրատա-
րակութիւններ, պարբերական թերթեր, յայտարարութիւններ, շրջաբերականներ, այցետոմսեր, մահազգեր,
հարսանեաց հրաւիրագրեր, կանոնադրներ, նամակազուլներ, պահարաններ, հաշուեցուցակներ ևն։

Յանձնարարութիւնները կը կատարուին փոքրով, ամենայն իմաստով և ճաշակատո սպագրութեամբ։

ԶԱՓԱՒՈՐ ԳԻՆԵՐՈՎ